

## Ֆելիքս Մովսիսյան

### ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1991-2017 ԹԹ.

*Քանայի բառեր.* Լեհահայ համայնք, հասարակական կազմակերպություններ, համագործակցություն, գիտաժողովներ, տոնակատարություններ, հավաքներ, երթեր, հայկական օրեր, խաչքարեր:

Ճակատագրի բերումով դարեր առաջ Լեհաստանում հայտնված հայության կյանքի ու գործունեության հիմնական վայրերը դարձան Կամենեց-Պոդոլսկը, Լվովը, Լուցկը, Յազլովեցը, Ստանիսլավը, մի փոքր ուշ նաև՝ Կրակովը, Լյուբլինը, Պոզնանը և Վարշավան<sup>1</sup>: Այստեղ հայերն ակնառու ներդրում ունեցան ինչպես Լեհաստանի տնտեսության, առևտրի ու արհեստների զարգացման գործում<sup>2</sup>, այնպես էլ գիտության, կրթության, արվեստի ու մշակույթի ոլորտներում<sup>3</sup>: Ըստ Անտոնի Ռոլլեի՝ հայերի «առավել կրթված լինելը»<sup>4</sup> և արևելյան լեզուների իմացությունը նրանց հնարավորություն տվեց պետական և համայնքային վարչակազմերում զբաղեցնել կարևոր ու պատասխանատու պաշտոններ, դառնալ ժամանակի հայտնի գիտնականներ, մշակույթի գործիչներ, զբաղվել հասարակական գործունեությամբ<sup>5</sup>:

Ժամանակակից Լեհաստանի հայ համայնքը նույնպես անմնացորդ չէ երկրի գիտամշակութային կյանքին և ծավալում է հասարակական հայանպաստ գործունեություն: Դրանով զբաղվում են մի շարք հայկական կազմակերպություններ, ընկերություններ ու միություններ: 1980-1990-ական թթ. այդ կազմակերպությունները ղեկավարում էին բացառապես հայկական ծագումով լեհեր, որոնք վաղուց մոռացել էին հայերենը, իրենց համարում էին լեհեր, որոնք նախնիները հիմնականում Գալիցիայից էին: Սակայն նրանց թվում կային նաև փոքր խումբ լեհահայեր, ովքեր հպարտ էին իրենց հայկական ծագումով, հայ մշակութային տարրերի կրողներ էին և պահպանում էին իրենց հնագույն հայրենիքի պատիվը: Մասնավորապես, նրանցից Ստանիսլավ Դոնիզևիչի նախաձեռնությամբ 1980 թ. գարնանը Կրակովի Լեհական ազգագրական ընկերությանը կից ստեղծվեց «Հայ մշակույթի համակիրների ընկերություն» (Koto Zainteresowan Kultura Ormian): Ընկերության առաջին նախագահ ընտրվեց Միխայ Բոհոսիևիչը, իսկ քարտուղար՝ Թերեզա Պասսակասը<sup>6</sup>: Ընկերության ստեղծումը կարևոր քայլ էր լեհահայերի հասարակական և մշակութային կյանքում, քանզի Երկրորդ աշխարհամարտի, Լվովի հայ հոգևորականության բնաջնջման, Արևելյան Կրեսների բնակչության բռնի տեղահանման հետ կապված ողբերգությունների ու Լեհաստանում կոմունիստական իրականության պատճառով առաջացած տարիների խոր լռությունից հետո լեհահայերն սկսեցին զգացնել տալ իրենց ներկայությունը: 1980 թ. նոյեմբերի 8-9-ը Կրակովում, Հայր Դոմինիկյանների տաճարում հրավիրվեց լեհահայերի առաջին համագումարը, որին մասնակցեցին Լեհաստանի տարբեր քաղաքներից ժամանած մոտ 500 ներկայացուցիչներ<sup>7</sup>:

<sup>1</sup> St' u Zakrzewska-Dubasowa M., Ormianie w dawnej Polsce, Lublin, 1982, s. 15-17. Stopka K., Ormianie w Polsce dawnej i dzisejszej, Krakow, 2000.

<sup>2</sup> Stopka K., Ormianie w Polsce dawnej i dzisejszej, Krakow, 2000.

<sup>3</sup> Terlecki A., Ormianie w dawnej Polsce, «Dialog Miedzokulturowy», 2013, nr. 3.

<sup>4</sup> Rolle A., Zameczki podolskie na kresach multanskich, t. 1, Warszawa, 1880, s. 299.

<sup>5</sup> Smolenski W., Mieszczanstwo warszawskie w koncu wieku XVIII, Warszawa, 1976, s. 68, Baronowski B., Ormianie w sluzbie dyplomacyjnej Rzeczypospolitej, Mysl Karaimska, 1946, t. 1, s. 119-137; Biuletyn Ormianskiego Towarzystwa Kulturalnego, 2001, nr. 24/25, s. 47-59.

<sup>6</sup> Ormianska Warszawa Հայոց Վարշավան Armenian Warsaw. Krzysztof Stopka, Andrzej A. Zieba, Armen Artwich, Monika Agopowicz, Warszawa, 2012, s. 168; Avedis, Աւետիս, 2015 zima, nr. 25, s. 1, 5.

<sup>7</sup> Ormianska Warszawa Հայոց Վարշավան Armenian Warsaw, s. 168.

1981 թ. Հայ մշակույթի համակիրների ընկերություն ստեղծվեց Վարչավայում պրոֆեսոր Լեոն Տեր-Օգանյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ<sup>1</sup>: 1983 թ. Մարիաննա Աբգարովիչի նախաձեռնությամբ և նախագահությամբ Հայ մշակույթի համակիրների ընկերություն ստեղծվեց Գդանսկում<sup>2</sup>: 1990 թ. Կրակովում հայկական ծագումով հասարակական մի խումբ գործիչներ Ադամ Տերլեցկու նախագահությամբ ստեղծեցին Հայ մշակութային ընկերություն<sup>3</sup>: Սկսած 1993 թ. ընկերությունը հրատարակում է «Հայ մշակութային ընկերության տեղեկագիր» հանդեսը<sup>4</sup>: 2014 թ. հոկտեմբերի 26-ին ընկերության նոր նախագահ ընտրվեց Մաչեյ Յանիկը<sup>5</sup>:

1993 թ. Գլիվիցեում Յուզեֆ Կովալչիկը ստեղծեց լեհահայ արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչի անվան հայերի միություն, որը մինչև 1999 թ. հրատարակում էր «Սուրբ Գրիգորի ավետաբեր» վերնագրով հանդես: 1993 թ. Էլբլոնգում բնակություն հաստատած հայերը Գենադի Մարտիրոսյանի նախագահությամբ հիմնադրեցին Լեհաստանի հայերի ընկերություն, որը պետք է հայ համայնքի նոր անդամներին օգնություն ցույց տար լեհական իշխանությունների և կազմակերպությունների հետ հարաբերություններ հաստատելու, նրանց բնակությունն ու բիզնեսը օրինականացնելու գործում, իրականացներ մշակութային գործունեություն:

XXI դարի սկզբում հայ համայնքի և հասարակական կազմակերպությունների գործունեությունը նկատելիորեն ակտիվացավ, որը շատ բանով պայմանավորված էր 1990-ական թթ. Հայաստանից և Խորհրդային Միության նախկին հանրապետություններից Կրակով հայերի հոսքի հետ: 2005 թ. հունվարի 6-ին լեհական կառավարությունն ընդունեց օրենք ազգային և էթնիկական փոքրամասնությունների ու տարածքային լեզվի մասին, որով հայերը թվով ինը այլ ազգությունների հետ ճանաչվեցին որպես ազգային փոքրամասնություն: Օրենքի համաձայն 2005 թ. հոկտեմբերի 1-ին կառավարությունում ստեղծվեց ազգային և էթնիկ փոքրամասնությունների հարցերով հանձնաժողով, որի կազմում հայ համայնքի առաջին ներկայացուցիչը դարձավ Վարչավայի Հայ մշակույթի համակիրների ընկերության նախագահ Մաչեյ Բոհոսիևիչը: 2009-2014 թթ. այս հանձնաժողովում լեհահայերի ներկայացուցիչը Լեհաստանում Հայ կաթողիկե եկեղեցու Հարավային թեմի առաջնորդ Տադեուշ Իսակովիչ-Ջալեսկին էր: 2014 թ. մայիսի 29-ին նրա հրաժարականից հետո ԼՀ վարչապետ Դոնալդ Տուսկն այդ պաշտոնում նշանակեց Էդվարդ Միեր-Ենդեյովիչին<sup>6</sup>:

2004 թ. Լեհաստան գաղթած մի խումբ հայերի նախաձեռնությամբ Վարչավայում ստեղծվեց «Արարատ» հիմնադրամը, որի հիմնական նպատակը հայ մշակույթի հովանավորումն ու զարգացումն է լեհահայերի շրջանում: 2005 թ. նոյեմբերի 26-ին Վարչավայում հայ ուսանողների և բարձր դասարանցիների համալեհական հավաքում նորեկ հայերին Լեհաստանում ինտեգրելու նպատակով հիմնադրվեց Հայ երիտասարդների միությունը:

2005 թ. լեհահայերի մշակութային ժառանգության պահպանությամբ մտահոգ հայ համայնքի մի խումբ անդամների նախաձեռնությամբ հաջողվեց Ռեչ Պոսպոլիտայի Կրեսների հայկական եկեղեցիներին պատկանող անտիկ ձեռագրերն ու արվեստի գործերը տեղափոխել Պարադիժից Գդանսկ և Վարչավա: Հայ պատմամշակութային ժառանգության ճակատագրով անհանգիստ մի խումբ լեհահայերի՝ ամիսներ շարունակ գործադրած ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ հավաքել և կենտրոնացնել 1700 բազմալեզու անտիկ ձեռագրեր, հնատիպ գրքեր, թերթեր, հայ կաթողիկե եկեղեցիների

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 162:

<sup>2</sup> Մաթևոսյան Մ. Լեհաստանի հայ համայնքի դերը Հայաստան-Լեհաստան հարաբերությունների զարգացման գործում, Լրաբեր հասարակական գիտությունների, 2013, թիվ 1, էջ 115:

<sup>3</sup> Avedis Աւետիս, 2015 zima, nr. 25, s. 5.

<sup>4</sup> Biuletyn Ormiańskiego Towarzystwa Kulturologo. Krakow.

<sup>5</sup> Avedis Աւետիս, 2014 zima, nr. 21, s. 2.

<sup>6</sup> Նա սերում է Ենդեյովիչների հին հայկական տոհմից, վարել է մի շարք բարձր կառավարչական պաշտոններ, հանդիսացել է հիմնադրամների նախագահ, լեհական հասարակական, մշակութային կենտրոնի քարտուղար, լեհական Thursday Luncheon ակումբի նախագահ, Մալթայի Ասպետների օրդենի վարչավայան մասնաճյուղի նախագահ: Տես Avedis Ավետիս, 2014 lato, nr. 19, s. 2.

ծխական մատյաններ, հագուստներ, նկարներ, տարբեր պարագաներ, անհատական արխիվ և իրեր, որոնք դարերի ընթացքում բարեբախտաբար չէին վնասվել<sup>1</sup>: Մշակութային այդ ժառանգությունը Հայ կաթողիկե եկեղեցու սեփականությունն էր, որը մի տեղ կենտրոնացնելու խնդրանքով լեհահայերը 2006 թ. ապրիլի 7-ին դիմեցին հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ կարդինալ Յուզեֆ Գլենպին: Նա ընդառաջեց այդ խնդրանքին և 2006 թ. ապրիլի 13-ին Վարչապայում մի խումբ լեհահայերի հետ միասին ստեղծեց «Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնարկություն»-ը (Fundacji Kultury i Dziedzictwa Ormian Polskich): Հիմնադիր ժողովը հաստատեց կազմակերպության կանոնադրությունը, որը հիմնարկության գլխավոր նպատակը համարում է լեհահայերի մշակութային ժառանգության և արժեքների պահպանությունը և Ռեչ Պոսպոլիտայի Կրեսների մշակույթի ու պատմության տարածումը: Հիմնադրամի վարչության առաջին նախագահ ընտրվեց Էվա Աբգարովիչը, իսկ խորհրդի նախագահ՝ պրոֆեսոր Քշիշտոֆ Ստոպկան<sup>2</sup>: 2007 թ. Հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ դարձած կարդինալ Կազիմեժ Նիշը շարունակեց սատարել հիմնադրամի գործունեությանը: ԼՄԺՀ հիմնադրամը ստեղծել է լեհահայոց արխիվը և հիմնադրման օրվանից մեծ ծավալի աշխատանքներ է կատարում լեհահայերի պատմության վերաբերյալ փաստաթղթերի, վավերագրերի, լուսանկարների ու ձեռագրերի հավաքման և հայկական հուշարձանների պահպանման ուղղությամբ:

2007 թ. Վարչապայում լեհահայերի ջանքերով ստեղծվեց Հայ մշակույթի համակիրների հիմնադրամ, իսկ Վերին Սիլեզիայում բնակվող հայ հին ու նոր համայնքների անդամների նախաձեռնությամբ և Հրաչյա Բոյաջյանի նախագահությամբ հիմնադրվեց Սիլեզիայի Հայերի միություն: 2009 թ. Լոժում ստեղծվեց երկրորդ հայկական միությունը, որը զբաղված է արտագաղթած հայ երեխաներին մայրենի լեզու սովորեցնելով և մշակութային գործունեությամբ: 2011 թ. Վրոցլավում Ադամ Դոմանասևիչի գլխավորությամբ կազմավորվեց Լեհահայերի ընկերությունը, որին անդամագրվեցին նաև Լեհաստան նոր արտագաղթած հայերը:

2011 թ. հայ համայնքը փորձեց համախմբել Լեհաստանում գործող բոլոր կազմակերպություններն ու միությունները մեկ միասնական կենտրոնում: Այդ նպատակով հիմնադրվեց Լեհաստանում Հայերի միություն, որը մի շարք հանգամանքների պատճառով ակտիվ գործունեություն ծավալել չկարողացավ:

Լեհաստանում գործող վերը նշված հայ հասարակական կազմակերպությունների թվում հայանպաստ բազմաբնույթ գործունեությամբ առանձնանում է հատկապես ԼՄԺՀ հիմնադրամը: Այս կազմակերպությունը, մշակութային գործունեությունից զատ, կոնկրետ քայլեր է իրականացնում նաև Լեհաստանում և Արևմտյան Ուկրաինայում պահպանվող հայկական հուշարձանների, գերեզմանատների վերանորոգման և վերականգնման ուղղությամբ: Հիմնադրամն իր գործունեության մասին մշտապես նյութեր է տեղադրում համացանցում՝ դրանք հասանելի դարձնելով լեհահայերի մշակութային ժառանգությամբ հետաքրքրվող գիտական հանրությանն ու հետաքրքրասերների լայն շրջաններին<sup>3</sup>: 2009 թ. ԼՄԺՀ հիմնադրամը պրոֆեսոր Անդժեյ Ջիեմբայի հեղինակությամբ թողարկեց «Լեհահայերը հին լուսանկարներում» օրացույցը<sup>4</sup>, որը ներկայացնում էր մի խումբ անվանի լեհահայերի կյանքն ու գործունեությունը:

2009 թ. հոկտեմբերի 17-ին Վարչապայի «Պատմության հետ հանդիպման տանը» տեղի ունեցավ «Awedis Ավետիս» թերթի շնորհանդեսը, որի գլխավոր խմբագիրը մինչև 2014 թ. հիմնադրամի ակտիվ գործիչներից Արմեն Արտվիխն էր: Հիմնադրամի միջոցներով եռամսյակը մեկ անվճար լույս տեսնող «Ավետիսը» պարբերաբար առաքվում է հայկական Սփյուռքի կենտրոնները: «Ավետիսը» լույս է տեսնում լեհերեն, իսկ առանձին հոդվածներ թարգմանվում են հայերեն: Թերթը լուսաբանում է հայ համայնքի բազ-

<sup>1</sup> Ormianska Warszawa Հայոց Վարչապայի Armenian Warsaw, s. 216.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 174-175:

<sup>3</sup> Հիմնադրամի գործունեության մասին մանրամասն Տե՛ս [http://dziedzictwo.ormianie.pl/images/stories/SprawozdanieFKIDOP\\_2013\\_kայրում](http://dziedzictwo.ormianie.pl/images/stories/SprawozdanieFKIDOP_2013_kայրում)

<sup>4</sup> Տե՛ս Ormianska Warszawa Հայոց Վարչապայի Armenian Warsaw, s. 174.

մակողմանի գործունեությունը և նրանում տեղի ունեցող նշանակալից բոլոր իրադարձությունները: Լույս է տեսել թերթի 33 համար<sup>1</sup>: Ներկայումս թերթի գլխավոր խմբագիրը Յակուբ Կոպչինսկին է, որի խմբագրական խորհրդում ընդգրկված են լեհ հայտնի հաճախորդներ և ճանաչված լեհահայեր:<sup>2</sup>

2009 թ. հունիսի 8-ին հիմնադրամը Լեհաստանի Գիտելիքների ակադեմիայի Արևելաեվրոպական հանձնաժողովի և Յագելլոնյան համալսարանի պատմության ֆակուլտետի հետ միասին Կրակովում անցկացրեց գիտաժողով՝ «Կրակովի հայերը» թեմայով: Գիտաժողովի շրջանակներում կայացավ բանավեճ՝ «Լեհահայերը. Ի՞նչ հեռանկարներ» թեմայով, որին մասնակցեցին լեհ ճանաչված ուսումնասիրողներ և լեհահայ մի խումբ գործիչներ: Բանավեճի սղագրությունը 2010 թ. լույս տեսավ «Լեհահայեր. Lebahajer»<sup>3</sup> ժողովածուի մեջ, որտեղ միաժամանակ գետնի վրա է հայ և լեհ ուսումնասիրողների 30-ից ավելի գիտական հոդվածներ՝ նվիրված լեհահայերի պատմությանը և հայ համայնքի գործունեությանը:

2012 թ. դեկտեմբերի 2-ին ԼՄԺՀ հիմնադրամի հովանավորությամբ Վարշավայում կայացավ Քշիշտոֆ Ստոպկայի, Անդժեյ Զիեմբայի, Արմեն Արտվիխի և Մոնիկա Ագոստովիչի հեղինակած «Հայոց Վարշավան» գրքի շնորհանդեսը: Լեհ ուսումնասիրողները նրանում արխիվային նորահայտ փաստաթղթերի և նյութերի հիման վրա ցույց են տալիս հայության ներդրումը Լեհաստանի տնտեսության, գիտության, արվեստի և մշակույթի զարգացման գործում, վերանայում են լեհահայերի կյանքում Վարշավայի դերի մասին լեհ պատմագրությունում ամրագրված կարծիքը: 2013 թ. այս աշխատանքը ճանաչվեց տարվա լավագույն պատմական գիրք, արժանացավ «Ոսկե արծվառյուծ» և ամենահեղինակավոր ԿԼԻՈ (KLIO) գիտական մրցանակների<sup>4</sup>: Գրքի հեղինակները հետագայում արժանացան կառավարական պարգևների: 2014 թ. ԼՄԺՀ խորհրդի անդամ Մոնիկա Ագոստովիչը հիմնադրամի աջակցությամբ հրատարակեց «Կրեսային Պոկուտիա: Հայկական Ռեչ Պոսպոլիտա» գիրքը, որը ճանաչվեց տարվա լավագույն պատմական գիրք<sup>5</sup>:

2010 թ. Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամը Կլաուդիա Մաշլեյի նախագծով հաստատեց իր խորհրդանիշը, որը դարձավ Ջատկի գառը կամ Աստծո գառը՝ հռոմեական «լաբարում» դրոշով<sup>6</sup>: 2016 թ. Կրակովի Հայ մշակութային ընկերության խնդրանքով ընկերության հայկական ծագումով արվեստագետ Կատաժինա Ագոստովիչը, հիմք ընդունելով XX դարի սկզբում լեհ պատմաբան Օսվալդ Բալզերի նկարագրությունը, Լվովի և Կամենեց-Պոդոլսկի հայ համայնքների փաստաթղթերում պահպանված կնիքների պատճենները, ստեղծեց Ջատկի գառան խորհրդանիշով երեք նոր գրաֆիկական պատկեր: Դրանցից առաջինը դարձավ լեհահայերի խորհրդանիշը, որը Հայ մշակութային ընկերությունը մտադիր է օգտագործել կարևոր միջոցառումների ժամանակ: Երկրորդ պատկերը դարձավ լեհահայերի գինանշանը, իսկ երրորդ տարբե-

<sup>1</sup> Awedis Աւետիս թերթը կարելի է ընթերցել *czasopisimo ormianskie* Awedis Աւետիս <http://www.awedis.ormianie.pl> կայքում:

<sup>2</sup> Տե՛ս [www.kievao.com.ua](http://www.kievao.com.ua)

<sup>3</sup> Լեհահայեր. Lebahajer *czasopisimo poswiecone dziejom Ormian polskich* 1, pod redakcja Krzysztofa Stopki, Krakow, 2010, s. 175-208.

<sup>4</sup> Awedis Աւետիս, 2016, wiosna, nr. 26, s. 2.

<sup>5</sup> Awedis Աւետիս, 2015, zima, nr. 25, s. 3.

<sup>6</sup> Լաբարում (լատիներեն՝ *Agnus Dei com labaro*) Հին Հռոմում անվանում էին լեգեոների զինանշանների մի տեսակը, որը կիրառվում էր կայսեր ներկայությամբ: Այն ուղղանկյուն մանուշակագույն դրոշ էր՝ ներքևի մասում զարդարված ոսկեգույն կախվող ծոպերով, որը քրիստոնյաների համար դարձավ Հիսուսի հարության և մթության ուժերի դեմ հաղթանակի խորհրդանիշը: Քրիստոնեական սրբապատկերներում կանգնած գառնուկը առջևի աջ ոտքով բռնել է վեր պարզած «լաբարում» դրոշածողը: Գառնուկի առաջ դրված է գավաթ, որտեղ լցվում է զոհաբերության արյունը: Հայերն իրենց գառնուկին Լեհաստան տարել են ամենայն հավանականությամբ Դրիմից, որտեղ այս խորհրդանիշը գոյություն ուներ առնվազն XIV դարից: Գառնուկը պատկերված էր հայկական եկեղեցիների և վանքերի պատերին, հանդիսանում էր Կաֆֆայի, իսկ XVII դարում՝ Լվովի հայերի զինանշանը: Այն իրենց անհատական կնիքներում օգտագործել են լեհահայ կաթողիկե եկեղեցու առաջնորդներ Նիկոլ Թորոսովիչը, Քշիշտոֆ Բերնատովիչը, վաճառական Պասխալիս Յակուբովիչը, առևտրական Զախարիա Մըսրովիչը:

րակը՝ «լեհահայեր» երկլեզու գրությամբ, նվիրվեց լեհահայերին՝ արտոնություններ շնորհելու 650-ամյակին<sup>1</sup>:

2014 թ. օգոստոսի 15-ին Գդանսկում հիմնադրվեց Հայկական միություն, որի նպատակն է հայկական մշակույթով հետաքրքրվողների խմբակի ավանդույթների շարունակումը, լեհահայերի հին ու նոր համայնքների միջև համագործակցության հաստատումը, համախմբելը լեհահայերին ու լեհերին համընդհանուր մեկ նպատակի շուրջը, հայ մշակութային և նյութական ժառանգության մասին հոգալը, նպաստելը հայոց պատմության ու մշակույթի մասին գիտելիքների տարածմանը Լեհաստանում: Միության ղեկավար կազմում ընդգրկվեցին հայտնի լեհահայ հասարակական գործիչներ քահանա Ցեզարի Անուսևիչը, Յակուբ Կոպչինսկին, Գագիկ Պարսամյանը, Մալգոժատա Սիկորսկա – Ստանիշևսկան և ուրիշներ<sup>2</sup>:

Լեհահայ համայնքի հասարակական կազմակերպությունների գործունեության կարևոր ուղղություններից մեկը հայոց ցեղասպանության ճանաչումն էր լեհական իշխանությունների կողմից: Դրա համար անհրաժեշտ նախապայմաններ ստեղծեցին Հռոմի պապ Հովհաննես-Պողոս Երկրորդի և Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվասնևսկու հայտարարությունները Հայաստանում 2001 թվականին, ուլքեր անհերքելի իրողություն անվանեցին հայոց ցեղասպանությունը<sup>3</sup>: 2004 թ. ապրիլի 17-ին Լեհաստանի հնագույն մայրաքաղաք Կրակովում հայ հին ու նոր համայնքների հարյուրավոր հայերի ու բազմաթիվ լեհերի մասնակցությամբ սբ. Միկոլայի եկեղեցու բակում հանդիսավորությամբ տեղադրվեց խաչքար՝ նվիրված հայոց ցեղասպանությանը: Խաչքար տեղադրելու նախաձեռնությամբ հանդես եկավ ճարտարապետ և արվեստագետ Յացեկ Խշոնշևսկին, որին հավանություն տվեցին հայ կաթողիկե եկեղեցու հարավային թեմի ղեկավար Տադեուշ Իսակովիչ-Չալեսկին և Հայ մշակութային ընկերության նախագահ Ադամ Տերլեցին: Տադեուշ Իսակովիչ-Չալեսկու մատուցած պատարագից հետո Կրակովի միտրոպոլիտ կարդինալ Ֆրանտիշեկ Մախարսկին օժեց խաչքարը, իսկ հայկական ծագումով լեհ դերասանուհի Աննա Դիմանան ընթերցեց Հովհաննես-Պողոս Երկրորդ պապի աղոթքը: ՀՀ դեսպան Աշոտ Հովակիմյանը Հայաստանյայց առաքելական եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց կարդինալ Ֆ. Մախարսկուն, Ա. Տերլեցկուն և Յ. Խշոնշևսկուն<sup>4</sup>:

Լեհահայերի կյանքում կարևոր իրադարձություն էր հայոց ցեղասպանության ճանաչումը 2005 թ. ապրիլի 19-ին: Այդ օրը Եվրոխորհրդարանի պատգամավոր, Սեյմի փոխմարշալ Կագիմեժ Միխայ Ույազդովսկին, պատգամավոր Մարեկ Յուրեկը, Լեհահայոց մշակույթի ու ժառանգության հիմնադրամի խորհրդի անդամ Յան Աբգարովիչը լեհահայ համայնքի աջակցությամբ Լեհաստանի Սեյմի քննարկմանը ներկայացրին Հայոց ցեղասպանությունը ճանաչող նախագիծ: Այն կազմել էր Յան Աբգարովիչը համագործակցած իր եղբոր՝ սենատոր Լուկաշ Աբգարովիչի, Տադեուշ Իսակովիչ-Չալեսկու, Սեյմի պատգամավորներ Մարեկ Յուրեկի, Ջրիգնև Ջիոբոյի և այլոց հետ: Նախագիծն ընթերցեց Սեյմի մարշալ Կլոդզիմեժ Չիմոշևիչը, որն առանց քննարկման պատգամավորներն ընդունեցին միաձայն<sup>5</sup>: Սեյմում տեղի ունեցավ նաև «XX դարի առաջին ցեղասպանությունը» խորագրով մուլտիմեդիա շնորհանդես, որը կազմակերպել էին հայոց ցեղասպանության 90-ամյակի միջազգայնացումները կանոնակարգող հայկական կոմիտեն և «Ֆրոնդա» հրատարակչությունը:

Սեյմի որոշումը մեծ ոգևորություն առաջացրեց լեհահայ համայնքի և հայ հասարակական կազմակերպությունների շրջանում, որոնք սկսեցին Լեհաստանի տարբեր քաղաքներում տեղական համայնքների աջակցությամբ խաչքարեր տեղադրել՝ նվիրված

<sup>1</sup> Avedis Աւետիս, 2016, zima, nr. 29, s. 5.

<sup>2</sup> Avedis Աւետիս, 2014 jesien, nr. 20, s. 3.

<sup>3</sup> Տե՛ս <http://panarmenian.net/arm/world/news/>

<sup>4</sup> Хшонщевский Я., Польские армяне и их хачкар в Кракове. «Анив», 2006, N 3.

<sup>5</sup> Uchwala Sejmu Rzeczypospolitej Polski ej z dnia 19 kwietnia 2005 r. w 90 rocznice ludobojstwa polenionego na ludnosci ormianskiej w Turcji podczas / wojny swiatowej.sejm.gov.pl; Ormianska Warszawa Հայոց Վարչաւան Armenian Warsaw, s. 171.



Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին: Լեհահայերի և նրանց բարեկամ լեհերի մասնակցությամբ հետագա տարիներին խաչքարեր տեղադրվեցին Էլբլոնգում, Գդանսկում, Գլիվիցեում, Կլեբարկում, Վրոցլավում, Վարշավայում, Լոժում, Լյուբլինում<sup>1</sup>: ԼՄԺՀ 2009 թ. հոկտեմբերի 17-ից դեկտեմբերի 6-ը Վարշավայում կազմակերպվեց «Հայացքն Արարատին. Հայերի ճակատագիրը Լեհաստանում» խորագրով ցուցահանդես: Դրա շրջանակներում լեհահայ Ջրիշեկ Կորդիսը ներկայացրեց «Հայերի հավաքական դիմանկարներ 2009 թ.» լուսանկարների ցուցադրում: Ցուցահանդեսին զուգահեռ հոկտեմբերի 17-18-ին անցկացվեցին «Հայկական օրեր», կազմակերպվեց էքսկուրսիա «Հայերի հետքերով», ներկայացվեց «Հայկական սիրտը Լեհաստանի համար» փաստագրական ֆիլմը՝ նվիրված լեհահայ արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչի հիշատակին<sup>2</sup>:

2010 թ. մայիսի 9-ին Գդանսկի սուրբ Պետրոսի և Պողոսի եկեղեցու պատին հանդիսավորությամբ բացվեց արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչի հուշատախտակը, որը պատրաստվել էր ԼՄԺՀ հիմնադրամի նախաձեռնությամբ և միջոցներով<sup>3</sup>: Ապրիլի 27-30-ին Ջամոռչում կայացավ «Հայ սփյուռքի մշակույթը» խորագրով միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին տարբեր երկրների 40-ից ավելի գիտնականներ: Գիտաժողովի ընթացքում ԼՄԺՀ հիմնադրամի ջանքերով ներկայացվեց հայ մշակույթին նվիրված «Ars Armeniaca» ցուցահանդես<sup>4</sup>: 2010 թ. հուլիսի 14-18-ին լեհական մի շարք կազմակերպություններ Գոյունվալդի դաշտում տեղի ունեցած ճակատամարտի 600-ամյակին նվիրված տոնակատարություն կազմակերպեցին, որին տաչովցի լեհահայ Ադամ Դոմանասկիչի նախաձեռնությամբ մասնակցեցին նաև մի խումբ լեհահայեր: Նրանք կազմել էին հայ ասպետների և արհեստավորների երկու խումբ ու հանդես եկան «Հայերը Լեհաստանի և Լիտվայի ժառայության ներքո» նշանաբանով: Դրանով նրանք մեկ անգամ ևս ընդգծեցին հայերի խաղացած դերը Լեհաստանի պատմության մեջ<sup>5</sup>, ովքեր 1410 թ. հուլիսի 15-ին լեհ թագավոր Վլադիսլավ Երկրորդ Յագալլոյի բանակի կազմում նպաստեցին Տևտոնյան օրդենի դեմ տարած վճռական հաղթանակին<sup>6</sup>:

ԼՄԺՀ ֆինանսավորմամբ 2010 թ. Լվովում ձեռնամուխ եղան XV դարի փայտե մատուռի և «Գողգոթա» քանդակի վերականգնմանը, որը տեղադրված է հայկական Մայր տաճարի բակում<sup>7</sup>: 2013 թ. սեպտեմբերի 14-15-ին տեղի ունեցավ «Գողգոթայի» բացման արարողությունը, որը վերածվեց հայկական մշակույթի տոնակատարության<sup>8</sup>: Հիմնադրամը 2010 թ. դեկտեմբերի 5-ին Վարշավայում կազմակերպեց հերթական «Հայկական օրը», որի ժամանակ, ի թիվս այլ միջոցառումների, ներկայացրեց լեհահայոց վիրտուալ արխիվը<sup>9</sup>: Այն ներառում է բազմաթիվ ձեռագրեր, հնատիպ գրքեր, թերթեր ու ամսագրեր, նկարներ, լուսանկարներ, պաշտամունքի իրեր, ծայնագրություններ ու ժապավեններ<sup>10</sup>: Ամիսներ անց՝ 2011 թ. մարտի 30-ին, Վարշավայում կայացավ Լեհահայոց մշակույթի ու ժառանգության հիմնարկության լեհահայոց արխիվի նոր գրասենյակի հանդիսավոր բացումը, որն օժեց կարդինալ Կազիմիեժ Նիչը<sup>11</sup>:

<sup>1</sup> Збигнев Шмурло, Армянские хачкары в Польше. «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2014, էջ 415-418:

<sup>2</sup> Avedis Աւետիս, 2014 wiosna, nr. 2, s. 9.

<sup>3</sup> Avedis Աւետիս, 2010 lato, nr. 3, s. 2.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 1-5:

<sup>5</sup> Avedis Աւետիս, 2010 lato, nr. 3, s. 7; jesien, nr. 4, s. 1, 6-8.

<sup>6</sup> Stu Kuczynski S.M. Bitwa pod Grunwaldem, Katowice: Slask, 1987; Nadolski A. Grunwald 1410, Warszawa; Bellone, 2009.

<sup>7</sup> Avedis Աւետիս, 2010 jesien, nr. 4, s. 3.

<sup>8</sup> Avedis Աւետիս, 2013 jesien, nr. 16, s. 1-2.

<sup>9</sup> Համացանցում այս արխիվը մատչելի է [www.archiwum.ormianie.pl](http://www.archiwum.ormianie.pl) կայքում:

<sup>10</sup> Avedis Աւետիս, 2014 zima, nr. 5, s. 1-5.

<sup>11</sup> Avedis Աւետիս, 2011 wiosna, nr. 6, s. 1,3.

Հայ հասարակական կազմակերպությունները չափազանց կարևորեցին 2011 թ. ապրիլի 1-ից հունիսի 30-ը Լեհաստանում անցկացված Ազգային համընդհանուր մարդահամարը և բնակահամարը: Մարդահամարը, համարելով բացառիկ հնարավորություն պարզելու հայկական ծագումով լեհերի և Լեհաստանում բնակվող հայերի մոտավոր թիվը՝ մոտ երկու տասնյակ ընկերություններ ու միություններ, դիմեցին հայությանը՝ կոչ անելով ակտիվորեն մասնակցել մարդահամարին և անպայման նշել իրենց ազգությունը<sup>1</sup>: 2011 թ. հայ հասարակական կազմակերպությունների թիվն ավելացավ ևս մեկով: Հոկտեմբերի 22-ին Վարչապայում Լեհաստանի տարբեր քաղաքներից ժամանած պատվիրակները հիմնադրեցին Լեհաստանի հայ երիտասարդների միություն, որը դեկտեմբերի 4-ին Վարչապայում անցկացրեց իր անդրանիկ երիտասարդական միջոցառումը<sup>2</sup>:

2011 թ. սեպտեմբերին ԼՄԺՀ նախաձեռնությամբ լեհահայ համայնքի անունից Գագիկ Պարսամյանը Երևանում Մատենադարանին հանձնեց 12-րդ դարում գրված Սկևռայի ավետարանը, որը վկայում է Լեհաստանում հայերի դարավոր ներկայության մասին<sup>3</sup>: ԼՄԺՀ հիմնադրամը 2011 թ. Վրոցլավում և Վարչապայում ներկայացրեց «Հայացքն Արարատին. Հայերի ճակատագիրը Լեհաստանում» հերթական ցուցահանդեսը, որն ուղեկցվեց հինգ տարբեր միջոցառումներով: Կրակովում, Գլիվիցեում և Յարոսլավում ցուցադրվեց «Մեծ մոռացվածը. Լեհահայոց արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչ» խորագրով ցուցահանդեսը: Հիմնադրամի համահեղինակությամբ կարդինալ Ստեֆան Վիշինսկու անվան համալսարանում անցկացվեց «Հայերը Լվովում. պատմություն, մշակույթ, արվեստ» գիտաժողով<sup>4</sup>:

Լեհաստանի Հայ մշակութային ընկերությունը և Կրակովի Հայ մշակույթով հետաքրքրվողների ընկերությունը 2012 թ. փետրվարի 27-ին կազմակերպեցին Մաչեյ Յանիկի զեկուցումը՝ «11-12-րդ դարերում Կիլիկիայում հայ պետականության առաջացման հանգամանքները» թեմայով, իսկ մարտի 26-ին՝ Ֆրանցիշեկ Վասիլի զեկուցումը՝ «Հայերը նախահինքնավար Գալիցիայում. Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ» թեմայով<sup>5</sup>: Լեհաստանում հայերի միությունը, սկսած 2005 թ. յուրաքանչյուր տարվա հոկտեմբերին Գլիվիցե քաղաքում կազմակերպում է ավանդական հայկական մշակութային օրեր:

2012 թ. հունվարի 24-ի Լեհաստանի Հանրապետության նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկու հետ Տադեուշ Իսակովիչ-Չալեսկին և Ադամ Տերլեցկին նախագահական պալատում քննարկեցին լեհահայ համայնքին հետաքրքրող մի շարք հարցեր<sup>6</sup>:

2012 թ. սկզբին ստեղծվեց Հայ-լեհական հասարակական, որը շարունակում է ավելի վաղ ստեղծված Շլոնսկի Հայերի միության գործունեությունը՝ փառատոնների, ցուցահանդեսների, մշակութային միջոցառումների և ֆուտբոլային մրցաշարերի տեսքով: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Լեհաստան մուտք գործած հայերի կեցությունն օրինականացնելու հարցին: 2012 թ. հունիսի 2-ին, համագործակցելով հայ առաքելական եկեղեցու հետ՝ կազմակերպությունը հանդես եկավ Գուրնի Շլոնսկի շրջանի հայկական ընտանիքներից սերող երեխաների համար դպրոց բացելու հայտարարությամբ: Կազմակերպությունը 2012 թ. բաց նամակով դիմեց Եվրոպական Խորհրդարանի ղեկավար Մարտին Շուլցին և Եվրոպական խորհրդի նախագահ Հերման վան Ռոմպեին՝ հայ-ադրբեջանական սահմանի վրա տեղի ունեցած արյունալի միջադեպի կապակցությամբ՝ կոչ անելով պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ<sup>7</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 6-7:

<sup>2</sup> Avedis Աւետիս, 2011 jesien, nr. 8, s. 2, nr. 9., s. 1.

<sup>3</sup> Avedis Աւետիս, 2011 jesien, nr. 8, s. 1, 6; Ormianska Warszawa Հայոց Վարչապայում Armenian Warsaw, s. 201.

<sup>4</sup> Avedis Աւետիս, 2011 zima, nr. 9, s. 5.

<sup>5</sup> Avedis Աւետիս, 2012 wiosna, nr. 10, s. 4.

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 1:

<sup>7</sup> Avedis Աւետիս, 2012 lato, nr. 11, s. 2.

Լեհահայոց մշակութային ընկերությունը 2012 թ. ապրիլի 30-ին Կրակովում լեհական Ազգագրական ընկերությանը կից Հայկական մշակույթով հետաքրքրվողների ընկերության հետ համատեղ կազմակերպեց հանդիպում Բոգդան Կասպրովիչի հետ: Նա հանդես եկավ «Հայկական գրչությունը Ռեչ Պոսպոլիտայում. Սիմեոն Լեհացի» թեմայով: Մայիսի 28-ին ընկերության հյուր Յակուբ Օշիեցկին զեկուցում կարդաց «Հայ կաթոլիկները Հայաստանում և Վրաստանում. Պատմությունն ու ներկա վիճակը» թեմայով<sup>1</sup>: 2012 թ. օգոստոսի 31-ին Վարշավայի Ցիտադել տաղավարում ՀՄՀԽ հիմնադրամը նախագահ Մարթա Աքսենտովիչ-Բոհոսիևիչի գլխավորությամբ Անկախության թանգարանի հետ կազմակերպեցին «Հայերը Sempor Fidelis» ցուցահանդեսի փակումը<sup>2</sup>: 2013 թ. ԼՄԺՀ հիմնադրամի խորհրդի նոր նախագահ ընտրվեց Լեհահայ հայտնի գործիչ Յան Աբգարովիչը<sup>3</sup>:

2013 թ. նոյեմբերի 16-ին Կրակովում Հայ մշակութային ընկերությունը կազմակերպեց համալեհական ժողով՝ նվիրված ՀՄԸ «Տեղեկագրի» հրատարակության 20-ամյակին<sup>4</sup>: Նոյեմբերի 30-ին Մագովեցկեի վոյեվոդա Յացեկ Կոզլովսկին Լեհաստանի Հանրապետության նախագահի անունից Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամի նախկին նախագահ Էվա Աբգարովիչին իր ծառայությունների համար շնորհեց Արժանիքների արժաթե խաչ շքանշան<sup>5</sup>:

Լեհահայերի հասարակական կյանքի ու գործունեության համար կարևոր իրադարձություն էր 2014 թ. մարտին Վարշավայում Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի նախաձեռնությամբ և նախագահ Գասպար Կարապետյանի մասնակցությամբ Լեհաստանի Հայ դատի հանձնախմբի ստեղծումը: Մարտի 12-ին հանձնախումբը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ շարադրված էին հանձնախմբի գործունեության ծրագրային հիմնական դրույթները<sup>6</sup>:

2015 թ. հայ հասարակական կազմակերպությունների հիմնական ուշադրությունը կենտրոնացած էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բազմաբնույթ միջոցառումների անցկացմանը: ՀՀ դեսպանության աջակցությամբ և հայ հասարակական կազմակերպությունների անմիջական ջանքերով Լեհաստանի 20-ից ավելի քաղաքներում ընդհանուր առմամբ կայացան ավելի քան 90 միջոցառումներ: Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամը

մարտի 13-ին Վարշավայում ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանի, սենատոր Լուկաշ Աբգարովիչի, Էդվարդ Միեր-Ենդժեյովիչի և Արմեն Արտվիխի մասնակցությամբ մամուլի ասուլիս կազմակերպեց<sup>7</sup>, իսկ մարտի 14-ին անցկացրեց «Հայեր 2015. Եղեռնի մոխիրներից վեր հառնող ժողովուրդ» խորագրով հանդիպում: ԼՄԺՀ նախագահ Յան Աբգարովիչի բացման խոսքից հետո ելույթ ունեցան Էդգար Ղազարյանը և Էդվարդ Միեր-Ենդժեյովիչը, իսկ Արմեն Արտվիխը և Անդժեյ Ջիեմբան հանդես եկան ցեղասպանության մասին դասախոսություններով: Բոգդան Կասպրովիչն ընթերցեց բանաստեղծություններ իր «Խաչքարեր» նոր ժողովածուից, իսկ պրոֆեսոր Յուզեֆ Նաունովիչը ներկայացրեց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված աշխարհով մեկ սփռված խաչքարերն ու հուշարձանները: Ցուցադրվեց «Հայոց ցեղասպանություն» վավերագրական ֆիլմը: ԼՄԺՀ հիմնադրամի հրավերով ապրիլի 15-ին Վարշավայում Ղոմինիկա Մաչիոսը հանդես եկավ «Լեհերը և հայոց ցեղասպանությունը. Պատճառները, ընթացքն ու հետևանքները լեհերի ընկալմամբ՝ սկսած առաջին կոտորածներից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը» դասախոսությամբ:

Ապրիլի 19-ին Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին Սեյմի ընդունած որոշման 10-րդ տարին լրանալու կապակցությամբ հայերի ու լեհերի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>2</sup> Avedis Աւետիս, 2012 zima, nr. 13, s. 4.

<sup>3</sup> Avedis Աւետիս, 2013 zima, nr. 18, s. 4.

<sup>4</sup> Avedis Աւետիս, 2013 lato, nr. 16, s. 4.

<sup>5</sup> Avedis Աւետիս, 2013 jesien, nr. 17, s. 3.

<sup>6</sup> Avedis Աւետիս, 2014 lato, nr. 19, s. 4.

<sup>7</sup> Avedis Աւետիս, 2015 lato, nr. 22, s. 3.



մեծ բազմություն երախտագիտության երթ անցկացրեց Վարչավայի Կրակովսկիե Պշեդմիշչիե փողոցով: Ապրիլի 23-ին Վարչավայի հոգևոր ձեռնարանի եկեղեցում հեռարձակվեց էջմիածնում անցկացվող ցեղասպանության զոհերի սրբադասման արարողությունը, ապա հնչեցին եկեղեցու զանգերը՝ հայկական բոլոր եկեղեցիների զանգերի հետ միաժամանակ: Նույն օրը Լեհ-հայկական հիմնադրամի նախաձեռնությամբ Ջամկովիե հրապարակում բացվեց «Հայերի ցեղասպանությունը համաշխարհային մամուլի առաջին էջերի հրապարակումներում» բացօթյա ցուցահանդես: Ապրիլի 24-ին Վարչավայում հայ համայնքը, ՀՀ դրոշները բարձր պարզած, անցկացրեց ամենամյա Լռության երթ դեպի Թուրքիայի դեսպանատուն: Այնուհետև Հայկական պուրակում տեղադրված խաչքարի մոտ հայոց ցեղասպանությունը դատապարտող ելույթներ ունեցան ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանն ու Սեյմի փոխխոսնակ Մարեկ Կուխչինսկին: Երեկոյան Կրակովսկիե Պշեդմիշչիե փողոցում կրկին լռության երթ տեղի ունեցավ<sup>1</sup>:

Կրակովում անցկացված միջոցառումների հիմնական կազմակերպիչը Հայ մշակութային ընկերությունն էր: Ապրիլի 25-ին Յագելլոնյան համալսարանում հանդես եկավ ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը: Այնուհետև տեղի ունեցավ երթ Կրակովի կենտրոնական փողոցներով, որի մասնակիցները Սուրբ Միկոլայ եկեղեցու բակում տեղադրված խաչքարին ծաղկեպսակ դրեցին, կատարվեց մոմավառություն, հնչեցին ելույթներ: Մալոպոլսկեի Իվանովիցե համայնքի երգչախումբը Հասմիկ Հարությունյան-Վոժնիակի ղեկավարությամբ կատարեց հայկական երգեր: Ապրիլի 26-ին Սուրբ Կույս Մարիամի Անարատ Հղության եկեղեցում քահանա Տաճատ Ծատուրյանը պատրագ մատուցեց Հայ առաքելական եկեղեցու ծիսակարգով: Երեկոյան Ֆիլիարմոնիայում ելույթ ունեցան Լիդիա Մատինյանի ղեկավարած կամերային երգչախումբը և Կրակովի հայկական դպրոցի սաները: Հայ մշակութային ընկերությունը մայիսի 11-ին Արվեստի պալատում բացեց «Vivat Armenia» խորագրով ցուցահանդես: Մայիսի 30-ին կայացավ զիտաժողով՝ «Գենոցիդիում. Կատարվել է բազմաթիվ անգամ, առաջինը հայերի դեմ»: Գլխավոր զեկուցողը Փարիզից հրավիրված հայտնի ցեղասպանագետ, պրոֆեսոր Ռայմոնդ Գևորգյանն էր<sup>2</sup>:

Կրոցլավում միջոցառումների շարք անցկացրեց Լեհահայերի ընկերակցությունը Քշիշտոֆ Մոյզեսովիչի ջանքերով: Ապրիլի 24-ին Սուրբ Հովհաննես Մկրտչի տաճարում պատարագ մատուցվեց, հնչեց հայկական երաժշտություն, այնուհետև կայացավ լռության երթ: Երթի հարյուրավոր մասնակիցներ հայկական խաչքարի մոտ ծաղկեպսակ դրեցին, հնչեցին Հայաստանի և Լեհաստանի օրհներգերը: Ելույթ ունեցան Լեհահայերի ընկերակցության ղեկավար Ադամ Դոմանասկիչը և մի խումբ լեհ հոգևորականներ: Ապրիլի 21-27-ը Գրոտովսկու ինստիտուտում բացվեց «Հետքեր» խորագրով լուսանկարների ցուցահանդես՝ նվիրված Հայոց մեծ եղեռնին: Ապրիլի 28-ին Դոլնոպոլնսկեի կինոկենտրոնում կայացավ «Հիշողության երգ» վավերագրական ֆիլմի պրեմիերան<sup>3</sup>:

Էլբլոնգում ապրիլի 23-ին հայկական խաչքարի մոտ հավաքվեց տեղի հայ համայնքը՝ Լեհաստանում Հայկական ընկերակցության ղեկավար Գենադի Մարտիրոսյանի գլխավորությամբ: Նրանք ծաղկեպսակ դրեցին խաչքարերին, կատարվեց մոմավառություն: Գլխվեցեում ապրիլի 26-ին կայացավ հիշատակի արարողություն, որը կազմակերպել էր արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչի անվան Լեհահայերի միությունը: Սուրբ Երրորդության հայ կաթողիկե եկեղեցում մատուցվեց պատարագ, հայկական խաչքարին ծաղիկներ դրվեցին, մոմավառություն կատարվեց, իսկ Տադեուշ Իսակովիչ-Ջալեսկին օժեց Հայոց ցեղասպանության հուշատախտակը, որը պիտի տեղադրվեր Հայերի միության շենքի ձակատամասում: Պերֆորմեր խմբի «Ի խորոց սրտի» համերգից հետո Հայերի միության շենքում տեղի ունեցավ Բոգդան Կասպրովիչի «խաչքար» գրքույկի շնորհանդեսը<sup>4</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 3, 5:

<sup>3</sup> Avedis Աւետիս, 2015 lato, nr. 23, s. 7.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 3:

Լյուբլինում Հայերի ընկերակցության ջանքերով ապրիլի 24-ին կայացավ «Հիշատակի երգ» համերգը, իսկ Սուրբ ընտանիքի եկեղեցում ելույթ ունեցավ հայ-լեհական «Կայրոս» տղամարդկանց համույթը: Նույն օրը Պշեմիշլում հայ համայնքը Սուրբ Երրորդություն եկեղեցու բակում և Բենեդիկտյան քույրերի վանական համալիրի մոտ ճրագավառություն կատարեց՝ դրանցով կազմելով 1915 տարեթիվը: Երկու օր անց նույն եկեղեցում արքեպիսկոպոս Յան Մագուրեկը ցեղասպանության նահատակների համար պատարագ մատուցեց: Շչեչինեկի հայ համայնքը մայիսի 23-ին նախ հայ առաքելական եկեղեցու ծիսակարգով պատարագի մասնակցեց, այնուհետև հայկական դրոշներով և ցեղասպանությունը դատապարտող ցուցապաստառներով լուռ երթ անցկացրեց Շչեչինի ամրոցի բակում, որտեղ ցեղասպանությունը դատապարտող մի շարք ելույթներ հնչեցին: Սվեբոջինում ցեղասպանության զոհերի հիշատակի օր անցկացվեց հունիսի 23-ին, որին մասնակցում էին հարակից բնակավայրերից եկած բազմաթիվ հայեր: Նրանք ճրագավառություն կատարեցին՝ դրանցով կազմելով 1915 թիվը<sup>1</sup>:

Հայ հասարակական կազմակերպությունները Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումներից բացի, տարվա ընթացքում շարունակեցին իրենց գիտամշակութային գործունեությունը: Միջոցառումների այդ շարքում Յարոսլավում անցկացվող Կրեստվյան մշակութային 7-րդ միջազգային փառատոնի յոթ օրերից մեկը՝ սեպտեմբերի 9-ը, նվիրվեց հայկական մշակույթին, երաժշտությանը և պատմությանը: Մոնիկա Ագոպսովիչը փառատոնի մասնակիցներին ներկայացրեց լեհահայերի պատմությանն ու մշակութային հարուստ ժառանգությանը նվիրված իր «Կրեստյան Պոկուտիա: Հայկական Ռեչպոսպոլիտա» գիրքը: Երեկոյան փառատոնի մասնակիցներն ունկնդրեցին հայկական երաժշտություն՝ Յակուբ Կոպչինսկու ղեկավարած տղամարդկանց երգչախմբի կատարմամբ: 2015 թ. հոկտեմբերի 8-ին Կարշավայում կայացած «Ժառանգություն» անվանումը կրող երկրորդ ցուցահանդեսում ԼՄԺՀ ներկայացրեց «Լեհահայոց արխիվ. 10-ամյա ավանդույթ» ցուցադրությունը<sup>2</sup>: Սեպտեմբերի 29-ին Կրոցլավի կենտրոնում տեղի ունեցավ հայկական պարտեզի հանդիսավոր բացումը, որի մասնակիցներն ունկնդրեցին հայկական երաժշտություն՝ Գևորգ և Արա Սայեդների կատարմամբ<sup>3</sup>: Կրակովի Հայկական մշակութային ընկերությունը հոկտեմբերի 21-ին Յագելլոնյան համալսարանում կազմակերպեց հանդիպում՝ ռումինահայ համայնքի ղեկավար, քաղաքական գործիչ, գրող Վարուժան Ոսկանյանի հետ, ում Հայոց ցեղասպանության մասին պատմող «Շշուկների մատյան» վեպը 2015 թ. թարգմանվեց լեհերեն:

2015 թ. լեհահայերի հասարակական կյանքը կարևորվեց ևս երկու իրադարձությամբ. լրացավ նրանց առաջին համաժողովի 35-ամյակը և Հայ մշակութային ընկերության հիմնադրման 25-ամյակը: Այս հոբելյանները նշելու նպատակով դեկտեմբերի 5-ին Կրակովի Վավելի տաճարի մոտ հավաքվեցին հայ մշակույթի մոտ 300 համակիրներ Լեհաստանի տարբեր քաղաքներից: Կարոլ Շիմանովսկու անվան ֆիլարմոնիայի Ոսկե դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն: Լեհաստանի Հանրապետության նախագահ Անդժեյ Դուդայի նամակը հավաքի մասնակիցներին ընթերցեց նախարար Կոյչեխ Կոլարսկին: ՀՀ դեսպան Է. Ղազարյանն իր խոսքում կարևորեց լեհահայերի հարյուրամյակների արժանապատիվ ներկայությունը Լեհաստանում: Օրվա երկրորդ կեսին Մշակույթի միջազգային կենտրոնում բացվեց ցուցահանդես, իսկ Յագելլոնյան համալսարանում կայացավ «Եկեք խոսենք Հայաստանի մասին» ծրագրի հերթական հանդիպումը<sup>4</sup>:

2015 թ. դեկտեմբերի 21-ին Էդվարդ Միեր-Ենդժեյովիչը, Յան Աբգարովիչը և Մարիա Օհանովիչ-Տարասիուկը լեհահայերի վիճակն ու նրանց հուզող խնդիրները ներկայացրին Մագովեցկեի նորանշանակ վոյեվոդա Ջոիսլավ Սիպերային<sup>5</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>2</sup> Avedis Աւետիս, 2015 jesien, nr. 24, s. 4.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>4</sup> Avedis Աւետիս, 2015 zima, nr. 25, s. 5.

<sup>5</sup> Avedis Աւետիս, 2016 wiosna, nr. 26, s. 4.

Հայ հասարակական կազմակերպությունների համար արգասաբեր էր նաև 2016 թ. ծավալած գործունեությունը: Հայ մշակութային ընկերությունը փետրվարի 9-ին Կրակովի Յագելլոնյան համալսարանում անցկացրեց հերթական հայագիտական միջոցառումը՝ նվիրված գրող և ճանապարհորդ Սիմեոն Լեհացուն<sup>1</sup>: Մարտի 19-ին այստեղ Լեհական Գիտելիքների ակադեմիայի Արևելաեվրոպական հանձնաժողովը և «Լեհահայեր» պարբերականի խմբագրությունը կազմակերպեցին «Խոսենք Հայաստանի մասին» շարքի հերթական միջոցառումը, որի բանախոսը հայոց պատմությանը քաջատեղյակ արևելագետ Մաչեյ Ֆալկովսկին էր<sup>2</sup>: Ապրիլի 27-ին Վելիչկայի քաղաքապետարանի դահլիճում Յագելլոնյան համալսարանի էթնիկական հարաբերությունների թանգարանի, Կրակովի Հայ մշակութային ընկերության և քաղաքապետարանի ջանքերով կայացավ միջոցառում՝ նվիրված հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին և Վելիչկայի հայերին: Ներկայացվեց լեհահայերին նվիրված հրապարակում, ապա հնչեց Կորնել Ույեյսկու և Յուզեֆ Նիկորովիչի «Խորալը»: «Բաքու 1905 թ.: Հայերի ջարդերի սկիզբը» ցուցադրությունից հետո հայոց ցեղասպանությանը նվիրված հետաքրքիր զեկուցումներով ու ելույթներով հանդես եկան լեհ մի խումբ ճանաչված հայագետներ<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձի միջոցառումների շրջանակներում 2016 թ. մայիսի 8-ին Վարշավայում կայացավ Լեհաստանի հայերի առաջին համաժողովը, որի հրավիրումը ողջունել էր Լեհաստանի Հանրապետության նախագահ Անդժեյ Դուդան: Լեհաստանի Սեյմի նախագահ Մարեկ Կուչինսկու և Սենատի նախագահ Ստանիսլավ Կարչևսկու ներկայացուցիչներն ընթերցեցին նրանց ուղերձները: Ներկաներին ողջունեցին Էդվարդ Միեր-Ենդժեյովիչը և ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը: Համաժողովի աշխատանքներն ընթացան երկու բաժանմունքներում՝ գործարար և հանրային, որի անդամները քննարկեցին իրենց առաջիկա ծրագրերը: Համաժողովի մասնակիցները ծաղիկներ դրեցին Վարշավայի Հայկական պուրակում տեղադրված հայկական խաչքարին<sup>4</sup>:

2016 թ. մայիսի 14-ին Վարշավայում նշվեց Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնարկության հիմնադրման 10-ամյակը, որին մասնակցում էին հիմնադրամի բարերարները, մեծ թվով գիտության, արվեստի ու մշակույթի գործիչներ և հյուրեր՝ Լեհաստանի հայաշատ տասը քաղաքներից ու Բեռլինից: Մասնակիցներին ողջունեցին Պիոտր Յակուբովսկին, Յան Աբգարովիչը և Էդգար Ղազարյանը: Մագդվեցկե վոյեվոդության Մշակույթի և զբոսաշրջության բաժնի տնօրեն Պավել Ցուկրովսկին պատվոգրեր հանձնեց հիմնադրամի գործունեությանն աջակցած մի խումբ լեհահայերի և լեհ հայագետների: Լեհաստանի պետական արխիվների գլխավոր տնօրեն Վոյչեխ Վոզնիակը ներկայացրեց հիմնադրամի և արխիվի համագործակցությունը: Մոնիկա Ագոպովիչը մասնակիցներին ներկայացրեց Հաննա Կոպչինսկա-Կլոսի և Քրիստինա Իսկրայի կազմած և Անդժեյ Ջիեմբայի խմբագրած «Լեհահայեր. Մշակույթ և ժառանգություն» պատկերազարդ ժողովածուն, որտեղ զետեղված են տասնմեկ հեղինակների գիտական հոդվածները: Մարիա Օհանովիչ-Տարասիուկը ներկայացրեց հիմնադրամի տասը տարվա գործունեության մասին մանրակրկիտ ու հետաքրքիր ցուցադրություն: Նա հիմնադրամի միջոցներով կատարված աշխատանքների թվում կարևորեց «Հայերը Լեհական թագավորությունում և Լիտվայի Մեծ իշխանությունում XVI-XVIII դարերում» եզակի քարտեզը: Լեհահայերի և Հայաստանի պատմության ուշագրավ անցքերի շուրջ հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ Կելցեի Ազգային պատկերասրահի աշխատակից Պավել Գժեշիկը, որը այնուհետև հյուրերին ներկայացրեց լեհահայերի ներկայության հետքերը Հին Վարշավայում: Հիմնադրամի գործունեության մասին դրվատանքի խոսքեր հնչեցրեց կարդինալ Կազիմեժ Նիչը<sup>5</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>2</sup> Avedis Աւետիս, 2016, lato, nr. 27, s. 3.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 2-3:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 2:

<sup>5</sup> Avedis Աւետիս, 2016, lato, nr. 27, s. 6.

2016 թ. հունիսի 24-25-ին Չրենիավե քաղաքի թանգարանում ԼՄԺՀ հիմնադրամն անցկացրեց գիտաժողով՝ «Հայեր. Պատմություն և մշակույթ» թեմայով: Գիտաժողովում ուշագրավ զեկուցումներով հանդես եկան հիմնադրամի նախագահ Յան Աբգարովիչը, թանգարանի տնօրեն Յան Մաչկովիակը, Լեհաստանի մի շարք համալսարանների տասնյակ պատմաբաններ, բանասերներ ու արվեստագետներ և մի խումբ երիտասարդ ուսումնասիրողներ<sup>1</sup>: 2016 թ. սեպտեմբերի 3-11-ը Լյուբլինում կայացավ Սննդի եվրոպական հերթական փառատոնը, որի պատվավոր ներկայացուցիչը այդ տարի Հայաստանն էր<sup>2</sup>:

Սեպտեմբերի 24-ին Կրոցլավում կայացավ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 25-ամյակին նվիրված միջոցառում: Հնչեցին Լեհաստանի և Հայաստանի օրհներգերը, ապա լեհերենով և հայերենով խոսք ասաց պրոֆեսոր Արա Սայեդը: Արմ-Պոլ հասարակական կազմակերպության ղեկավար Կարեն Շահումյանն իր ելույթում անդրադարձավ Լեհաստանում հայերի հաստատման փուլերին, իսկ ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը կարևորեց լեհահայ համայնքի գործունեությունը: Հայաստանի և Լեհաստանի պատմությունների նմանությունների մասին խոսեցին Կրոցլավի քաղաքային խորհրդի ներկայացուցիչ Սեբաստիան Լորենցը և Լեհաստանի հայերի ընկերակցության նախագահ Ադամ Դոմանասկիչը: Հնչեցին Կոմիտասի ստեղծագործությունները և Քշիշտոֆ Թեոդորովիչի «Armenia Felix»-ը, իսկ Արա և Արամ Սայեդները հանդես եկան հայկական դասական երաժշտության համերգով: Հուզիչ ելույթ ունեցավ Կրոցլավի համալսարանի պրոֆեսոր Բոգուսլավ Պազը, ցուցադրվեց Հայաստանի մասին երկու ֆիլմ<sup>3</sup>:

Սեպտեմբերի 27-28-ին Հայաստանի անկախության 25-ամյակին նվիրված «Հայկական օրեր» անցկացվեցին Լանցկորոնա փոքրիկ քաղաքում, որը կազմակերպել էին «Հայ-լեհական համագործակցություն» կազմակերպությունը, տեղի քաղաքապետարանը և ՀՀ դեսպանատունը: Այդ օրերին հնչեց հայկական դասական և ժողովրդական երաժշտություն, բացվեց երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես<sup>4</sup>: Նոյեմբերի 16-ին Ուստշիկի Դոլնե քաղաքում տեղի ունեցավ «Մեկ երկրում, մեկ եկեղեցում: Արևելյան կաթոլիկ եկեղեցիները» խորագրով գիտաժողով, որտեղ XVII-XX դարերում Լեհաստանում հայ կաթողիկե եկեղեցու գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ Տադեոշ Իսակովիչ-Չալեսկին<sup>5</sup>: Դեկտեմբերի 16-ին Կելցեի Ազգային պատկերասրահում կայացավ «Հայկական արվեստանոց. Արհեստագործության գաղտնիքները» խորագրով ցուցահանդես<sup>6</sup>: ԼՄԺՀ հիմնադրամը դեկտեմբերին հրատարակեց «Լեհահայերի դիմանկարներ 2017» թվով չորրորդ օրացույցը, որի հեղինակ Անդժեյ Ջիենբան ներկայացրել է լեհ հանրությանը ոչ շատ հայտնի 13 անվանի լեհահայերի կյանքն ու գործունեությունը<sup>7</sup>:

Հայ հասարակական կազմակերպությունների 2017 թ. գործունեությունը հիմնականում նվիրված էր Հայաստանի և Լեհաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին և Լեհաստանում հայերին տված առաջին արտոնության 650-ամյակին: Դրանց նվիրված անդրանիկ միջոցառումը կայացավ Էդվարդ Միեր-Ենդժեյովիչի նախաձեռնությամբ, ում ակտիվ աջակցում էին Հայ մշակութային ընկերությունը, ԼՄԺՀ հիմնադրամը, աբբա Թորոսովիչի անվան հայերի միությունը, Լեհահայոց ընկերակցությունը և Գդանսկի հայ համայնքը: Այս կազմակերպությունների ջանքերով հունվարի 20-ին Կրակովում Վավելի թագավորական ամրոցի տաճարում, տարբեր քաղաքներից եկած մեծ թվով լեհահայեր հավաքվեցին Ստանիսլավ Եպիսկոպոսի և Վլադիսլավ Յագելլո թագավորի տապանաքարերի մոտ: Օրվա ընտրությունը

<sup>1</sup> Avedis Աւետիս, 2016 jesien, nr. 28, s. 6.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>5</sup> Avedis Աւետիս, 2016 lato, nr. 29, s. 3.

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 1:

<sup>7</sup> <http://dziedzictwo.ormianie.pl/co obesnie/>

պատահական չէր, քանզի 650 տարի առաջ ճիշտ այդ օրը՝ 1367 թ. հունվարի 20-ին, Լվովի «Վիսոկի» ամրոցում Կազիմեժ Մեծ թագավորը հայերին արտոնություն շնորհեց թույլատրելով Լվովում եպիսկոպոսություն հիմնել: Քսան տարի անց Վլադիսլավ Յագելլո թագավորն այդ արտոնությունը հաստատեց<sup>1</sup>: Լեհահայ համայնքի պատվիրակները, ՀՀ դեսպանը, Լեհաստանի նախագահի, արտաքին գործերի նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները ծաղկեպսակներ դրեցին Կազիմեժ Մեծի և Վլադիսլավ Յագելլոյի տապանաքարերին: Հայերենով հնչեց «Հայր մերը», իսկ Կոլեգիում Մայուս դահլիճում պրոֆեսոր Քշիշտոֆ Ստոպկան դասախոսություն կարդացած լեհ թագավորների շնորհած արտոնությունների մասին: Սբ. Աննայի եկեղեցում Տադեուշ Իսակովիչ-Ջալեսկին պատարագ մատուցեց, Յանուշ Շիշկոն և Հրաչ Միսակյանը հայերեն շարականներ կատարեցին<sup>2</sup>:

Լեհահայերի կյանքում կարևոր այդ հոբելյաններին էր նվիրված 2017 թ. փետրվարի 24-26-ին Դոլնի Շլոնսկ քաղաքի Բժեժնոյի պալատում Մաժենա և Քշիշտոֆ Գրադեկիների հյուրընկալությամբ տեղի ունեցած միջոցառումը և փետրվարի 26-ին Կրակովում «Ճանապարհ դեպի անկախություն» խորագրի շրջանակներում կայացած հերթական հանդիպումը, որտեղ Կրոցլավի համալսարանի դասախոս Ֆրանցիշեկ Վասիլը գեկուցում կարդաց «Հայերը Վիսլայի ափին» թեմայով:

Մարտի 29-ին Լեհաստանի Հանրապետության նախագահ Անդժեյ Դուդան նախագահական պալատում ընդունելություն կազմակերպեց՝ ի պատիվ լեհահայ համայնքի 650-ամյակին, որին մասնակցեցին հայ համայնքի 65 ներկայացուցիչներ, այդ թվում՝ հայ հասարակական կազմակերպությունների ղեկավարները, ինչպես նաև լեհահայ ճանաչված գործիչներ, հոգևորականներ և լեհ հայագետներ:

Կրակովի Հայ մշակութային ընկերության և Էդվարդ Միեր-Ենդժեյովիչի նախաձեռնությամբ 2017 թ. ապրիլի 17-ին ժեշովում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված հայերին արտոնություններ շնորհելու 650-ամյակին<sup>3</sup>: Մայիսի 8-ին Վարշավայում կայացավ լեհահայերի երկրորդ համաժողովը, որին մասնակցում էին շուրջ երկու տասնյակ հայ հասարակական կազմակերպությունների բազմաթիվ ներկայացուցիչներ<sup>4</sup>: Մայիսի 12-ին Լվովում կայացավ Հայկական տաճարի վերանորոգված բակի բացումը, որից առաջ ԼՄժՀ հիմնադրամի միջոցներով վերանորոգվել էր զանգակատունը, այնուհետև Սբ. Քշիշտոֆի սյունը<sup>5</sup>: ԼՄժՀ հիմնադրամը և Կրակովի Հայ մշակութային ընկերությունը մայիսի 19-ին Մենլենիցի Անկախության թանգարանում բացեցին Մարիա Բաուչիկի «Հայաստանը փնտրում է ակունքները» լուսանկարների ցուցահանդեսը<sup>6</sup>:

Հայ մշակութային ընկերությունը Մալթական ասպետների լեհական միության հետ համատեղ 2017 թ. մայիսի 27-28-ին անցկացրեց գիտաժողով՝ նվիրված ասպետական օրդենների գործունեությանը Կիլիկիայի և Կիպրոսի թագավորություններում<sup>7</sup>: Հունիսի 2-3-ը Վարշավայում անցկացվեց «Հայկական օրեր», որը վերածվեց տոնախմբության: ԼՄժՀ հիմնադրամը Պիոտրկովի քաղաքապետարանի հետ համատեղ հունիսի 10-ին կազմակերպեց «Հայերը վերադառնում են Պիոտրկով» խորագրով միջոցառումների շարք, որին մասնակցում էին եվրոպական չորս երկրներից և Լեհաստանի տարբեր քաղաքներից ժամանած 100-ից ավելի լեհահայեր, պաշտոնական անձինք և հյուրեր<sup>8</sup>: Լեհաստանի Հայկական հիմնադրամի նախաձեռնությամբ հունիսի 25-ին Կոչցիելեց քաղաքում կայացավ «Հայկական օր», որի ընթացքում հնչեցին ելույթներ, հայկական երգ ու երաժշտություն:

<sup>1</sup> Ormianska Warszawa Հայոց Վարշավան Armenian Warsaw, s. 19, 202.

<sup>2</sup> Avedis Աւետիս, 2017 wiosna, nr. 30, s. 5.

<sup>3</sup> Avedis Աւետիս, 2017 lato, nr. 31, s. 3.

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Avedis Աւետիս, 2017, wiosna, nr. 30, s. 5.

<sup>7</sup> [http://www.ormianie.pl/ormianskie\\_Towarzystwo\\_Kulturalne](http://www.ormianie.pl/ormianskie_Towarzystwo_Kulturalne)

<sup>8</sup> Avedis Աւետիս, 2017, lato, nr. 31, s. 1, 5.



Հայ-լեհական բարեկամության վառ դրսևորում էր 2017 թ. օգոստոսի 14-ին Լյուբլին քաղաքի Յան Կոխանովսկու անվան հրապարակում տեղադրված խաչքարը, որը հայ համայնքի նվերն էր քաղաքի հիմնադրման 700-ամյակի կապակցությամբ:

Հուլիսի 23-ին Հայ մշակութային ընկերությունը երկրորդ անգամ անցկացրեց Վարդավառի տոնախմբություն Կրակովից ոչ հեռու գտնվող Բրանդիսովկայի Բյոդկովսկի հովտում<sup>1</sup>: Օգոստոսի 13-ին Գդանսկում տեղի հայ համայնքն անցկացրեց «Հայկական օր» բազմաբնույթ միջոցառումը, որի շրջանակում տեղի ունեցավ Գդանսկի Հայկական միության գրասենյակի բացումը<sup>2</sup>: Օգոստոսի 27-ին Ունիեով քաղաքի Թագավորական ամրոցում կայացավ «Հայկական օր», որը կազմակերպել էին տեղի քաղաքապետարանը, ՀՀ դեսպանատունը, Լեհաստանի Հայկական և Հայ-լեհական հիմնադրամները, Կոլեի միջազգային համագործակցության կազմակերպությունը: Պաշտոնատար մի շարք անձանց ելույթներից հետո ամրոցի բացօթյա ամֆիթատրոնում կայացավ համերգ՝ հայազգի երաժիշտներից կազմված «Հաբիարջան» էստրադային համույթի կատարմամբ:

Օգոստոսի 31-ին հանդիսավորությամբ «Հայկական օր» կայացավ նաև Բելոստոկում<sup>3</sup>: Հոբելյաններին նվիրված հերթական միջոցառումը կայացավ 2017 թ. սեպտեմբերի 9-ին Վոլոմինում: Հայկական երեկոյի մասնակիցներին ողջունեցին ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը, Վոլոմինի քաղաքապետ Կազիմեթ Ռակովսկին, Լեհաստանի Հայկական հիմնադրամի փոխնախագահ Մաչեյ Բոհոսիևիչը: Հայ համայնքին և հայոց պատմությանը նվիրված պրոֆեսոր Քշիշտոֆ Յաբլանկայի դասախոսությունից հետո հայկական ժողովրդական երաժշտության կատարումներով հանդես եկավ Հակոբ Բաղդասարյանի ղեկավարած «Մուսա լեռ» գործիքային համույթը: Լեհաստանի Հայկական հիմնադրամը ներկայացրեց հայ համայնքի պատմությանը և լեհահայ գործիչներին նվիրված ցուցահանդես:

2017 թ. սեպտեմբերի 11-ին ԼՄԺՀ հիմնադրամը Յարոսլավում անցկացրեց «Հայաստանի օր», որի շրջանակներում ներկայացրեց «Ղեմքով դեպի Արարատը: Հայկական ճակատագիրը Լեհաստանում» ցուցահանդես: Այնուհետև Յարոսլավի լեհահայերը հնչեցրին հայկական երաժշտություն, հանդես եկան ասմունքով և ժողովրդական երգերի կատարմամբ<sup>4</sup>: Սեպտեմբերի 18-ին Վարշավայում ԼՄԺՀ հիմնադրամի նախաձեռնությամբ բացվեց Սուրբ Դոմինիկյան եկեղեցու դիմացի պատին փակցված ցուցատախտակը՝ «Հայկական նրբանցք» անվանումով: Դա թվով երրորդ նմանատիպ ցուցատախտակն է Լվովից ու Գդանսկից հետո, որտեղ նշված են անվանի լեհահայեր Գժեգոժ Պիրամովիչի, Պասխալիս Յակուբովիչի, Յուզեֆ Մինասովիչի և այլոց անունները<sup>5</sup>:

Սեպտեմբերի 19-ին Լեհաստանի Սենատում կայացավ «Հայերը Լեհաստանում: Գոյատևման յոթ դարեր» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին Կրակովում Լեհական գիտության և գեղարվեստի ակադեմիան, Սեյմի մշակույթի ու զանգվածային լրատվամիջոցների կոմիտեն և Կրակովի Հայ մշակութային ընկերակցությունը՝ սենատոր Յան Շարինի նախաձեռնությամբ: Սեյմի մարշալ Ստանիսլավ Կարչևսկին, բացելով համաժողովը, ընդգծեց լեհահայերի ներդրումը Լեհաստանի պատմությունում և մշակույթում՝ վկայակոչելով Տեոդոր Աքսենտովիչին, Քշիշտոֆ Պենդերեցկուն, Ջրիգն Հերբերտին, Ջրիգն Ցիբուլսկուն և Աննա Դիմնային: Գիտական հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան մի խումբ ճանաչված լեհ հայագետներ և ուսումնասիրողներ: Նույն օրը գիտաժողովի շրջանակներում Լեհաստանի գլխավոր արխիվում բացվեց ցուցահանդես՝ նվիրված անվանի լեհահայերին<sup>6</sup>: Հոբելյաններին նվիրված հայ հասարակական կազմակերպությունների հերթական միջոցառումը տեղի

<sup>1</sup> [http://www.ormianie.pl/ormianskie\\_Towarzystwo\\_Kulturalne](http://www.ormianie.pl/ormianskie_Towarzystwo_Kulturalne)

<sup>2</sup> Avedis Աւետիս, 2017 jesien, nr. 32, s. 1, 4.

<sup>3</sup> Avedis Աւետիս, 2017 jesien, nr. 32, s. 6.

<sup>4</sup> Fundacja Kultury i Dziedzictwa Ormian Polskich, <http://dziedzictwo.orminie.pl/>

<sup>5</sup> Avedis Աւետիս, 2017 jesien, nr. 32, s. 2.

<sup>6</sup> <http://dziedzictwo.orminie.pl/>

ունեցավ 2017 թ. սեպտեմբերին Կրակովի գյուղատնտեսական գրադարանում<sup>1</sup>: Սեպտեմբերի 26-ին Գդանսկի Հայկական միությունը Լոստովիցում նշեց լեհահայ անվանի հոգևորական և հասարակական գործիչ Կազիմեժ Ֆիլիպիակի մահվան 25-ամյակը<sup>2</sup>: Սեպտեմբերի 28-ին ԼՄԺՀ հիմնադրամը Օլավում անցկացրեց «Հայկական օր», որի ընթացքում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված 650-ամյա տարելիցին: 2017 թ. սեպտեմբերի 29-ին Տուխով քաղաքում կայացավ գիտաժողով՝ «Հայերը համագործակցությունում» թեմայով, բացվեց նույն խորագրով ցուցահանդես<sup>3</sup>: Սեպտեմբերի 30-ին Սրոդմիեչի մշակույթի կենտրոնում բացվեց լեհահայ նկարչուհի Բարբարա Բիլեցկա-Վոյնիցկոյի անհատական ցուցահանդեսը՝ «Վերադարձ դեպի արմատներ» խորագրով<sup>4</sup>:

Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամը հոկտեմբերի 18-ին Պուլտուսկում և հոկտեմբերի 19-ին Վարշավայում Լեհաստանի մի շարք գիտական հաստատությունների հետ համատեղ անցկացրեց գիտաժողովներ՝ նվիրված հայոց սփյուռքին, ցեղասպանությանը, պատմությանն ու մշակույթին: Գիտաժողովներում հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան ճանաչված հայագետներ, հայոց պատմության և մշակույթի հարցերով ուսումնասիրողներ<sup>5</sup>: Ուշագրավ է, որ հայ-լեհական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակը և լեհահայերին արտոնություններ շնորհելու 650-ամյակը հայ հասարակական կազմակերպություններից բացի կարևորեցին և նշեցին նաև լեհական գիտական հաստատություններն ու կազմակերպությունները: Մասնավորապես, Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի, Պոզնանի բարեկամների ընկերության և Վրոցլավի համալսարանի համատեղ ուժերով հոկտեմբերի 12-ին կայացավ գիտաժողով՝ «Հայաստանը 20-րդ դարից 21-րդ դար անցման սահմանագծում»: Գիտաժողովում հանդես եկած հայկական արմատներով մի խումբ ուսումնասիրողներ ներկայացրին իրենց դիտարկումները Հայաստանում տեղի ունեցած սոցիալական, քաղաքական և մշակութային փոփոխությունների մասին<sup>6</sup>: Նույն օրը լեհական «Տրոյկա» ռադիոյի եթերում Յան Աբգարովիչը, պրոֆեսոր Յուզեֆ Նաունովիչը և Մարեկ Յուրեկը, բարձր գնահատելով հայ համայնքի ներկայությունը Լեհաստանում, 650-ամյա հոբելյանը համարեցին Լեհաստանի և հայ բնակչության միջև առաջին քաղաքական բաց հարաբերությունը<sup>7</sup>: Հոկտեմբերի 19-ին Վարշավայում Գիտելիքների ակադեմիայի Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ կայացած գիտաժողովում զեկուցած բանախոսները ներկայացրին հայ ազնվականությանը նվիրված ուսումնասիրությունները: Լեհաստանում հայ ասպետներին և ազնվականներին նվիրված գիտական քննարկում կայացավ նոյեմբերի 4-ին Կրակովում, որը կազմակերպել էր Հայկական մշակութային ընկերությունը:

Հոկտեմբերի 19-ին հիրավի պատմական իրադարձություն տեղի ունեցավ Լեհաստանի Հանրապետության Սենատում: Այդ օրը սենատի 68 անդամներ միաձայն ընդունեցին սենատոր, պրոֆեսոր Յան Ժարինի հեղինակած նախագիծը՝ լեհահայերին շնորհած արտոնությունների 650-ամյակի կապակցությամբ: Լեհ սենատորն իր ելույթում նշեց, որ այդ «հոբելյանը ոչ միայն հայերի և հայկական ծագումով լեհերի կարևոր խորհրդանիշն է, այլև ամբողջ Լեհաստանի»: Սենատոր Բոգդան Կլիխը շեշտեց, որ այդ բանաձևն ընդունվում է ոչ թե քաղաքական շահից ելնելով, այլ «սրտի թելադրանքով»: Սենատի մարշալ Ստանիսլավ Կարչևսկու հրավերով նիստին ներկա էր ՀՀ պատվիրակությունը՝ ԱԺ նախագահ Արա Բաբլոյանի գլխավորությամբ: Այդ օրը Սենատի շենքում բացվեց «Հայերը Լեհաստանում» խորագրով ցուցահանդես, որը կազմակերպել էր Հայկական հիմնադրամը: Հոկտեմբերի 21-ին Վարշավայում ՀՀ դեսպանատան

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Avedis Աւետիս, 2017 jesien, nr. 32, s. 2.

<sup>3</sup> <http://dziedzictwo.orminie.pl/>

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Avedis Աւետիս, 2017 jesien, nr. 32, s. 5.

<sup>6</sup> Avedis Աւետիս, 2017 zima, nr. 33, s. 4.

<sup>7</sup> <http://dziedzictwo.ormianie.pl>

նախաձեռնությամբ կատարվեց ծառատունկ, որի մասնակիցները հիշարժան հորեյանի կապակցությամբ տնկեցին 650 ծառ<sup>1</sup>:

Նոյեմբերի 24-ին Լեհաստանի Սեյմի 435 պատգամավորներ միաձայն ընդունեցին հատուկ բանաձև՝ «Կազմիմեժ Մեծ թագավորի կողմից Լեհաստանի հայերին շնորհված արտոնությունների 650-ամյա տարեդարձի մասին»: Բանաձևում մասնավորապես ասվում է. «Սեյմն ընդգծում է այն նշանակալից դերը, որ ունեցել են հայերը Լեհաստանի պատմության մեջ և իր հարգանքի հավաստիքն է հայտնում թե՛ նրանց, ովքեր իրենց կյանքը զոհեցին Լեհաստանի ազատության համար, և թե՛ նրանց, որ հավատացին ու հավատարիմ մնացին Լեհաստանին»<sup>2</sup>:

Հայ հասարակական կազմակերպությունները տարին ավարտեցին մշակութային մի շարք միջոցառումներով: ԼՄԺՀ հիմնադրամն ավարտին հասցրեց Վարչավայի Պոլեցկի գերեզմանատան հատակագծի կազմումը, որտեղ նշված են Լեհահայերի հուղարկավորման տեղերը<sup>3</sup>: Նոյեմբերի 10-ին Լեհահայ Բարբարա Բելկա - Վոյնիցկոն բացեց «Վերադարձ դեպի ակունքները» խորագրով իր հերթական ցուցահանդեսը: Նոյեմբերի 18-19-ին Գլիվիցեում անցկացվեցին հայկական մշակույթի թվով 12-րդ օրերը: Նոյեմբերի 19-ին հայկական տոնախմբություն տեղի ունեցավ Ստրաչովկում, որտեղ հայ համայնքի նախաձեռնությամբ և միջոցներով բացվեց Կազիմեժ Մեծ թագավորի արձանը և խաչքար: Դեկտեմբերի 11-ին Վարչավայում մի խումբ Լեհահայերի նախաձեռնությամբ կայացավ հայ մշակույթին նվիրված հերթական միջոցառումը: Նույն օրը Կալցեում բացվեց «Լեհահայերը, Կալցեի հայերը» խորագրով ցուցահանդես, տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված հայկական հյուրընկալությանն ու հյուրասիրությանը: Դեկտեմբերին ԼՄԺՀ հիմնադրամը Վարչավայի Դոմինիկյան եկեղեցում վերականգնեց XVII դարի նշանավոր Լեհահայ Յակուբ Մինասովիչի տպանագիրը և թողարկեց «Հայերը XXI դարի Լեհական արվեստում» օրացույցը, որը պատմում է ժամանակակից Լեհաստանում ստեղծագործող 12 հայ գեղանկարիչների մասին: Վերլուծելով Լեհաստանի Հանրապետությունում գործող հայ հասարակական կազմակերպությունների գործունեությունը սկսած 1990-ական թվականներից մինչև մեր օրերը՝ կարելի է փաստել, որ դրանք հատկապես 2000-ական թվականներին մշտական ու հետևողական աշխատանքներ են տանում Լեհ հասարակության լայն խավերին հայոց պատմությունը, գիտությունը, մշակույթն ու արվեստը հավուր պատշաճի ներկայացնելու, Լեհաստանի պատմությունում Լեհահայերի նշանակալի ավանդը ներկայացնելու, հայ-Լեհական դարավոր կապերը զարգացնելու և ամրապնդելու ուղղությամբ:

**Феликс Мовсисян, Деятельность армянских общественных организаций в Польской Республике в 1991-2017 гг.** На сегодняшний день в Республике Польша действуют более двадцати армянских общественных организаций, сообществ, компаний, союзов, фондов, которые осуществляют активную проармянскую деятельность, тесно взаимодействуя с польскими государственными структурами, с научными и высшими учебными заведениями и с культурными центрами. Основная цель их деятельности - помощь в интеграции новых членов армянской общины в польское общество, чтобы они стали полноценными представителями этой конгломерации и были сопричастны с событиями, произошедшими в жизни армянства. Из общественных организаций Фонд культуры и наследия армян Польши, Армянское культурное сообщество, Сообщество польских армян, Союз армян в Польше, Сообщество армян Польши и другие вместе с армянской общиной периодически проводят дни Армении, научные конференции, выставки, обсуждения, просмотры фильмов, вечера, праздники, собрания и шествия. Армянские общественные организации в сотрудничестве с посольством РА в Польше, с польскими властями, с различными

<sup>1</sup> Avedis Աւետիս, 2017 zima, nr. 33, s. 1.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 2:

<sup>3</sup> Այս մասին տե՛ս Լեհահայերի վիրտուալ արխիվի [www.archiwum.pl](http://www.archiwum.pl) վեբ կայքը

учреждениями и с общиной польских армян за прошедшие годы провели многочисленные мероприятия, посвященные 100-летию Геноцида армян, 25-летию установления дипломатических отношений между Арменией и Польшей, 650-летию со дня предоставления привилегий польским армянам и т.д.

**Ключевые слова:** польская армянская община, общественные организации, взаимодействие, научные конференции, празднества, собрания, шествия, армянские дни, кресты-камни.

**Feliks Movsisyan, The Activities of Armenian NGOs in the Republic of Poland during the period of 1991-2017.** More than twenty Armenian NGOs, companies, associations and foundations are currently functioning on the territory of the Republic of Poland. They are carrying out Armenophilic activities closely cooperating with Polish governmental structures, scientific and higher educational institutions and cultural centres. The primary goal of their activities is to help the members of the new Armenian community to integrate into the Polish society, to become full members, to be informed about the main events in the lives of Armenians.

Of all the NGOs, “The Polish-Armenian Culture and Heritage Organization” Foundation, the Armenian Cultural Society, the Polish-Armenian Society, The Armenian Association in Poland and some others, in close cooperation with the Armenian community, periodically organize Armenian days, conferences, exhibitions, discussions, film watching, parties, celebrations, meetings and demonstrations. Cooperating with RA Embassy in Poland, Polish authorities, different institutions and Polish-Armenian community the Armenian NGOs have so far organized various events devoted to the Centenary Anniversary of the Armenian Genocide, the 25<sup>th</sup> Anniversary of Diplomatic Relations between Armenia and Poland, the 650<sup>th</sup> Anniversary of granting privileges to Armenians in Poland and some other important activities.

**Key Words:** Polish-Armenian community, non-governmental organizations (NGOs), cooperation, conferences, celebrations, meetings, demonstrations, Armenian days, cross-stones.